

Սիրելի Միականներ,  
Եկեղեցւոյ մը կեանքին մէջ 1 տարին մեծ նշանակութիւն ունի. բացի այն պարագայէն երբ անոր անդամները կարեւոր որոշում մը տան եւ եկեղեցին անկիւադարձ մը կատարէ: Ի մտի ունիմ պարագայ մը, որուն պիտի անդրադառնամ յետոյ:

Աւելորդ է յիշեցնել որ եկեղեցւոյ մը Հովիւն ու Միական Խորհուրդը մի մարմին կը կազմեն. հետեւաբար մեկ մասը իմ տեղեկագրիս կը գտնուի Մի. Խորհուրդին տալիք զեկոյցին մէջ. ուստի կը զեղջեմ շատ մը բաներ ժամանակ խնայելու համար:

1972 տարւոյ ընթացքին մեր եկեղեցւոյ կեանքը ընթացաւ բնականօրէն, այն — պէս ինչպէս անցուցած էինք 1969-է ասդին, իմ հոս ժամանած Օրէս սկսեալ:

Իբրեւ Հովիւ կատարեցինք մեր բոլոր պարտականութիւնները. ա—Քարոզչութիւն. բ — եկեղեցական արարողութիւններ. գ — Ժողովներ, եկեղեցւոյս 4 կազմակերպութեանց գրեթէ բոլոր 60-ի մօտ ժողովներուն նախագահած եմ: . դ — Խորհրդակատարութիւններ. զարմանալի սակայն իրաւ. միայն 1 Սկոտուիւն 1 կնուսք. եւ 3 մահերու յաղման կարգ կատարած եմ: ե — Հովուական այցելութիւններ կատարեցինք ըստ կարելւոյն. 3 տարի առաջ երկու անգամ փորձեցինք ընդհանրացնել Տնօրէնէք—ի աւանդական սովորութիւնը ինչպէս որ մեր 30-ի մօտ եկեղեցիներ կը կատարեն կանոնաւոր կերպով. մեր Միականներուն ընդառաջումը շատ աննշան եղաւ:

Բացի հովուական սլաշտօնէ, կը վարենք նաեւ Առաջնորդի Պատգամաւորի պաշտօնը Մայրաքաղաքիս մէջ. գնահատելի եւ իմաստուն գործակցութեամբ մեր 4 անդամներուն:

Ուաշինկթըն գտնուելն ուս սլաշտօնաւ, միացեալ նահանգներէ եւ արտասահմանէն դա— նազան ու զարմանազան դիմումներու պատասխանելու պարտաւոր կըլլանք. (Օրինակներ)

Ձանազան առիթներով Ամերիկեան եկեղեցիներու կողմէ հրաւեր ստացած ենք ըլլալ քարոզելու եւ դասախօսելու. ինչպէս նաեւ սլաշտօնական առիթներով մեր եկեղեցիներ— կայացնելու: Բախտատամբ նախորդ տարիներու այս տարի քիչ թիւով այցելու Հովիւներ ունեցանք, Հովուական փոխանակութեան հետեւանքով:

Յառաջացող 1973 տարւոյ ընթացքին պիտի դիմաւորենք երկու նշանակալից դէպ— քեր: Առաջինը Ամենայն Հայոց Էկեհառ Հայրապետի մեզի տալիք Յրդ Օրհնաբեր այ— ցելութիւնն է, որ պիտի ժամանէ Մայիս 1-ին: Երկրորդը եկեղեցւոյս Օծման 10րդ տարեդարձն է, որ պէտք է արժանաւայել հանդիսութեամբ տօնենք գալիք աշնան:

Մեր ցանկութիւնը եղած է միշտ ապահովել մասնակցութիւնը ժողովուրդին Ս. պատարագին: Այս մասին որոշ փորձեր ըրած ենք, անոնցմէ մին, անցնող Դեկտ. 10-ին Գ. Գասպարեանի օգնութեամբ կատարուած բացատրական Պատարագն էր: Ի մտի ունինք այս ուղղութեամբ շարունակել մեր մտքին մէջ ունեցած ծրագիրը: Շատ կարեւոր ուրիշ գործ մը ունինք, այն ալ մեր ժողովուրդին Պատարագի մասնակցութեան, եւ արարողութիւնը հասկնալու անյետաձգելի անհրաժեշտութիւնն է: Կուգեմ որ յառաջադէմ Մուխ մը ըլլանք, չվախնանք կիրարկել նորութիւններ, առանց հիմնական սկզբունքներ ոտ— նակոխելու. թող մեզմով սկսի բարեկարգութեան եւ եկեղեցին արդիականացնող փորձը: Կի՛րա գործածենք:

Նոր անդամներու համար արշաւ մը կազմակերպելու գործը մէկէ ւաւելի պատճառ— ներով անհրաժեշտութիւն մըն է. միակ միջոցը անձնական շփումն է յաջողելու: Պալթիմորի համայնքը շուրջ 200 անձ ունի. երբ հեռաւորութեան պատճառաւ քիչեր կուգան եկեղեցի. կարգադրելու ծրագիր ունինք որ մենք երթանք Պալթիմոր հաւաքե— րու զիրենք, որպէսզի չը կորսուի հայութիւնը այդ մեծ քաղաքին մէջ:

Շատերը կը յիշէք անցեալ Օգոստ. 9-ի մեր անդամական ժողովը: Հողի մը գնման համար ժողովին արդիւնքը յայտնի է ձեզի. այդ մասին միտքս կուգեմ բացատրել հոս: Հողն ու կալուածը ժողովուրդին համար է, եւ ոչ թէ ժողովուրդը կալուածին համար: Ուրախ եմ որ Կալուած գտնող Ս. Գ. Յանձնախումբը իր գործը կը շարունակէ. ուրիշ նոր կալուած մը կայ: Կարեւորին այն է որ Մուխը երկուքի չը բաժնուի: Գիտեն ոմանք թէ աշխատանք կը կատարեմ հայ մեծահարուստներ այս մասին հետաքրքրելու:

Ի սրտէ մաղթանքս է որ սիրոյ, փոխադարձ յարգանքի, համերաշխութեան ոգին մեզ բոլորս միացեալ պահէ մեր Ս. եկեղեցիին հովանիին տակ եւ փրկչին Բարի հոգին ա— առաջնորդէ բոլորը ի գործս բարիս. ամէն:

Սիրով եւ լաւազոյն մաղթանքներով

յամի Տեառն 1973, օկտոբերի 28ն.  
Ուաշինկթըն Տ. Գ.

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐՃԱՊԵՏԵԱՆ